

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ՏԵՂԵԿԱՆՔ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման
դեպքերի վերաբերյալ



ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՆՈ՞Ր ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ԶԼՍ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)



Տեղեկանքը պատրաստվել է «Մարդու իրավունքների վրա հիմնված պատասխանատու ոստիկանության ստեղծում՝ որպես հանրության վստահության երաշխիք» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՋԼՄ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ	5
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
2021 թ. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՅՐԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	7
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ, ՈՉ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԴԻՊՈՒԿԱՀԱՐՆԵՐ, ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԻՐՏ ՈՒԺ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ	8
«ՖԻԶԳՈՌՈՂՈՎ»	12
ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԾԻՔԸ ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	13
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՍՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ	14
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ	16
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՅՈՒՆԻՔՈՒՄ	18
2021 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՅՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	20
ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ VS ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ	20
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	24
«ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ» ՏԱՐԱԾՔՆԵՐ	25
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ VS ԴԱՏԱԿԱՆ ԱՑԱՆՆԵՐ	26
ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ «ՈՒՅԴԵՐ»	26
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ՄԱՍԻՆ	28
2021 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	28

«...ներքին անվտանգություն ասելով մենք չենք հասկացել երբեք ու երբևէ չենք հասկանալու քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակում, ընդդիմության գործունեության սահմանափակում և այդպես շարունակ...»
**ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան,
26.01.2019 թ.**

Մենք ասում էինք, որ մերժում ենք բռնությունը որպես ներհայաստանյան որևէ հարցի, այդ թվում՝ քաղաքական հարցերի լուծման միջոց:
Մենք ասում էինք, որ նույնիսկ ամենակոռուսկացված, հանցավոր պաշտոնյայի, իշխանության դեմ չենք պատրաստվում բռնություն գործադրել:
**ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՀՀ ԱԺ-ում,
12.02.2019 թ.**

2020 թ. ապրիլի 23-ին ՀՀ կառավարության թիվ [638-Լ որոշմամբ](#) հաստատվեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունն ու 2020-2022 թթ. գործողությունների ծրագիրը, որով, ի թիվս այլնի, նախատեսվում է ոստիկանության ծառայողի բարեվարքության, կրթության զարգացում և թափանցիկության ու հաշվետվողականության աճ, սակայն ռազմավարության իրականացմանը զուգահեռ՝ ոստիկանության ծառայողների գործողություններն ուղեկցվում են մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով:

2021 թ. ուղեկցվել է ոստիկանության ծառայողների կողմից իրավական առումով անհամաչափ, անհիմն, անկանխատեսելի գործողություններով: Ոստիկանության գործողությունները, ինչպես նաև 2021 թ. կառավարության օրենսդրական նախաձեռնությունները (մասնավորապես՝ ծանր վիրավորանք հողվածի ներմուծումը քրեական օրենսգիրք) անհամաչափ սահմանափակում են խոսքի ազատության և կարծիքն ազատ արտահայտելու իրավունքները, որոնք ոտնահարվել են նաև 2020 թ. կորոնավիրուսային վարակով պայմանավորված հրապարակումներ անելու սահմանափակմամբ (տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ ՀՔԱՎ գրասենյակի [2020 թ. տեղեկանքը](#)): 2021 թ.-ին ՀՀ առանձին քաղաքացիներ [հետապնդվում էին](#), [բերման էին ենթարկվում](#) Նիկոլ Փաշինյանի հասցեին վիրավորական, հայհոյանք պարունակող արտահայտություններ հնչեցնելու համար, իսկ 2021 թ. օգոստոսի 30-ից հետո, երբ ուժի մեծ մտավ «Ծանր վիրավորանքի» հողվածը, իրավապահ մարմինների կողմից արձանագրվել է նշված հողվածի հատկանիշներով հանցավոր արարքների [418 դեպք](#):

2021 թ. առանձնացավ նաև ոստիկանության համակարգում անպատժելիության մթնոլորտի խորացմամբ: Ոստիկանության ծառայողների բռնությունները, խոշտանգման դեպքերը, հակաիրավական գործողությունները չեն պատժվել, ինչը մեծացնում է անպատժելիությունը և խրախուսում է նման ապօրինի գործողությունները: Հատուկ քննչական ծառայությունը, օրինակ, հանցակազմ չի հայտնաբերել [Մարցում ոստիկանության գործողություններում](#), Վանաձորի ոստիկանության ծառայողների կողմից անձին [խոշտանգելու գործում](#): Ավելին՝ 2021 թ. Հատուկ քննչական ծառայության լուծարմամբ և

խոշտանգման դեպքերը Ազգային անվտանգության ծառայությանը վերապահելը հետընթաց էր՝ համակարգում բռնությունները կանխարգելելու տեսանկյունից: Համաձայն Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի՝ Ազգային անվտանգության մարմինը [վարչապետին ենթակա մարմին է](#): Այսինքն՝ այն անկախ և անաչառ մարմին համարվել չի կարող, այն գործում է վարչապետի ենթակայության տակ, հետևաբար՝ վերջինիս քննիչները չեն կարող ապահովել խոշտանգման գործերով գործերի քննության արդյունավետության առաջնային և կարևորագույն չափանիշը: Նշենք, որ այս նախաձեռնությունը սուր քննադատության արժանացավ քաղաքացիական հասարակության կողմից, և ներկայումս օրենքը գտնվում է լրամշակման փուլում: Համաձայն նոր կարգավորումների՝ խոշտանգման գործերով քննությունը վերապահվելու է ՀՀ քննչական կոմիտեին:

ԶԼՄ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկման արդյունքները փաստում են ԶԼՄ հրապարակումների կարևորությունը և նշանակությունը՝ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի լուսաբանման և հանրային վերահսկողության ապահովման հարցում: Նշենք, որ 2021 թ. ոչ բոլոր առցանց լրատվամիջոցներն էին լուսաբանում ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունները և ոչ բոլոր ակցիաներն էին արժանանում լրատվամիջոցների պատշաճ ուշադրությանը (օրինակ՝ «Ֆիզգոռոդոդկի» դեպքերը հիմնականում ներկայացվել են ակցիայի մասնակիցների՝ սոցիալական ցանցերում տեղադրված հրապարակումների և տեսագրությունների հիման վրա): Հարկ ենք համարում նշել, որ ԶԼՄ հրապարակումների մշտադիտարկումը ոստիկանության գործողությունները գնահատելու արդյունավետ գործիքներից է: Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, ուղիղ եթերների հնարավորությունը՝ լրագրողների աշխատանքն ուսումնասիրության լայն դաշտ է ստեղծում: Դեպքի վայրից տեղեկատվության և տեսագրությունների հասանելիությունը լրատվամիջոցները դարձնում են ուսումնասիրության սկզբնաղբյուր՝ ապահովելով իրավիճակը հնարավորինս օբյեկտիվորեն գնահատելու հնարավորություն: Հաշվի առնելով զանգվածային լրատվամիջոցների հնարավորությունները՝ ուղիղ հեռարձակելու և լուսաբանելու դեպքերը և դրանց համատեքստում ոստիկանության գործողությունները, չափազանց կարևոր է ԶԼՄ-ների դերակատարությունը՝ հնարավոր չարաշահումները կանխելու, այդպիսիների դեպքում դրանք լուսաբանելու և դրանով ՀՀ քաղաքացիների ապահովվածության և վստահության մակարդակը բարձրացնելու, մարդու իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելու հարցում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել են 15 առցանց լրատվամիջոց և ՀՀ

նստիկանության պաշտոնական կայքէջը¹: Պետք է նկատի ունենալ, որ 2021 թ. աչքի է ընկել քաղաքական բևեռացվածության էլ ավելի մեծ մակարդակով, որն անխուսափելիորեն չէր կարող չարտահայտվել նաև տարբեր քաղաքական ուժերի հետ ասոցացվող կամ նույնականացվող ԶԼՄ-ների հրապարակումների վրա: ՀՔԱՎ գրասենյակը չի կատարել նման ԶԼՄ-ների հրապարակումներում ներկայացվող փաստերի ճշտում:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ անհատական բնույթի դեպքեր, հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլ հանրային միջոցառումներ: Հաշվի առնելով, որ 2021 թ.-ի հունիսի 20-ին և հոկտեմբերի 17-ին տեղի են ունեցել համապատասխանաբար ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) և Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ՝ Սյունիքի, Շիրակի և Տավուշի մարզերում, դիտարկվել և առանձնացվել են նաև քարոզարշավները և նախընտրական ու ընտրական փուլերում այլ միջոցառումները:

Տեղեկանքում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել ոչ միայն ապօրինի բերման ենթարկելու դեպքերը, այլև բոլոր այն դեպքերը, երբ անձը թեկուզ օրենքով սահմանված կարգով է բերման ենթարկվել նստիկանության բաժին, սակայն պահվել է նստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 3 ժամից ավել ([հոդված 131](#)¹), ինչպես նաև բերման ենթարկելու փորձերը:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված և դասակարգված են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների ցանկը, ինչպես նաև առանձին մասնագիտական խմբերի (գլխավորապես լրագրողների) գործունեության խոչընդոտման բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Մարդու խախտված իրավունքների վերաբերյալ դիտարկումներում ներառված են ինչպես առանձին այդ իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ այլ իրավունքների խախտման հետ զուգորդված դեպքերը:

Մույն մեթոդաբանության արդյունավետությունը ապացուցվել է նաև արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում:

¹ Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.armlur.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.lin.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.hetq.am, www.a1plus.am, www.factor.am, www.police.am

2021 թ. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՍ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2021 թ. մոտ 100 հավաքների և բողոքի ցույցերի ընթացքում արձանագրվել է ոստիկանության գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտման 94 դեպք, այսինքն՝ կարող ենք պնդել, որ գրեթե չի եղել հանրային բողոքի ցույց, որը չուղեկցվեր ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների իրավունքների խախտմամբ:

Իհարկե պետք է նկատի ունենալ, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո [հարձակումները](#) Կառավարության և ՀՀ Ազգային ժողովի շենքերի նկատմամբ, ՀՀ Ազգային ժողովի նախագահի նկատմամբ ծանր մարմնական վնասվածքներ հասցրած բռնությունները, հետագա բողոքի ցույցերի ժամանակ մահապատիժներ, բռնություններ ցուցադրող տեսարանները կարող էին հետագա բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանական ուժերի ներգրավման համար հիմքեր ստեղծել, սակայն բողոքի ամեն մի ցույցի դեպքում պետք է հիմնավորված լինի լիարժեք կահավորանքով և միջոցներով զինված ոստիկանական մեծաթիվ ուժերի ներգրավումը, որը պետք է հասկանալի ու կանխատեսելի լինի հանրության, անկախ դիտորդի համար: Հակառակ պարագայում, ոստիկանական ուժերի նման շարունակական ներգրավումը ոչ միայն հիմնավոր չի կարող համարվել, այլ նաև հիմնավոր կասկածներ է առաջացնում դրանց ներգրավման հիմնավորվածության, համաչափության տեսակետից և կարող է ընկալվել որպես ոստիկանության ուժի անհամաչափ գործադրում, որը նպատակ ունի քաղաքացիների շրջանում առաջացնելու վախի, անվստահության մթնոլորտ իրավապահ մարմինների նկատմամբ և հանգեցնելու հնարավոր ավելի ծայրահեղ դրսևորումների, որոնք կպահանջեն էլ ավելի կտրուկ միջոցների կիրառում ոստիկանության կողմից: Ահա նման արատավոր շղթան կասեցնելու տեսակետից է խիստ կարևորվում հավաքների, բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանության ներգրավման համաչափությունն ու օրինականությունը:

Նշենք, որ այնուամենայնիվ որոշ եզակի ակցիաներ ոստիկանության ծառայողների կողմից չեն խոչընդոտվել: Օրինակ՝ 2021 թ. հունվարի 5-ի կառավարության դիմաց [անհետ կորած զինծառայողների ծնողների բողոքի ցույցը](#), 2021 թ. փետրվարի 6-ի անհետ կորած զինծառայողների հարազատների [ակցիան ՊՆ-ի դիմաց](#), 2021 թ. մարտի 1-ի՝ «Հայրենիքի փրկության շարժման» կողմից Բաղրամյան պողոտայում, [ԱԾ շենքի դիմացից մեկնարկած հանրահավաքը](#) և այլն: Մինևույն ժամանակ նույն վայրերում, մասնավորապես ԱԾ, կառավարության, նախարարությունների մոտ կազմակերպված այլ բողոքի ակցիաները խոչընդոտվել են ոստիկանության ծառայողների կողմից, կիրառվել է անհամաչափ ֆիզիկական ուժ, առանց իրավական հիմքերը պատշաճ ներկայացնելու՝ կամայականորեն բերման են ենթարկվել ակցիայի մասնակիցներ, անցորդներ, տարեցներ, անչափահասներ:

Առավել մեծ թվով խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը՝ 83 դեպք (88.3%): Այս իրավունքի հետ զուգորդված՝ խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ 60 դեպք (63.8%), և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 48 դեպք (51%): Խախտվել են նաև առողջության, ազատ տեղաշարժվելու, արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, սեփականության, խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքները: 6 դեպքում խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը: 94 դեպքերից 81-ը գրանցվել է Երևանում, 4-ը՝ Արմավիրի մարզում, 3-ական դեպք՝ Արարատի և Գեղարքունիքի մարզերում, 2 դեպք՝ Շիրակի մարզում, մեկ դեպք՝ Վայոց Ձորի մարզում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):

[ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ, ՈՉ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԴԻՊԼՈՄԱԿԱՆՆԵՐ, ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԻՐՏ ՈՒԺ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ](#)

2021 թ. փետրվարի 22-ին Հայ հեղափոխական դաշնակցության Հայաստանի երիտասարդական միության (ՀՅԴ ՀԵՄ) ներկայացուցիչների երթից հետո քաղաքացիական հագուստով անձինք առանց ներկայանալու առևանգել են ՀՅԴ ՀԵՄ-ի անդամ [անչափահաս Ավետիս Տիշենքճեանին](#): Հաջորդիվ պարզվել է, որ անչափահաս երիտասարդը գտնվում է ոստիկանության բաժանմունքում: *Այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ անձին առևանգողները կամ եղել են ոստիկանության ծառայողներ, կամ գործել են ոստիկանության ծառայողների հրահանգով: Երկու դեպքում էլ դա օրենքի կոպիտ խախտում է: Նշենք, որ մեքենան, որով տարել են անչափահասին, նույնպես ծառայողական չէր: Նշվում է, որ անչափահասին բերման են ենթարկել ՀԲԾ շենքի ուղղությամբ [ձվեր նետելու համար](#): Նախ նշենք, որ, ըստ տեսագրության, երիտասարդից բացի, [այլ անձինք էլ էին նետում ձվեր](#): Չնայած նման գործողություններին՝ այնուամենայնիվ անընդունելի է ոստիկանության ծառայողների վարքագիծը. առանց ծառայողական համազգեստի և մեքենայի, առանց հիմքեր ներկայացնելու, բռնության գործադրմամբ անձին մեքենա նստեցնելը համարժեք է անձին առևանգելուն:*

2021 թ. [ապրիլի 22-ին](#) Քննչական կոմիտեի մոտ կանգնած էին ոստիկաններ, որոնք չունեին համապատասխան տարբերանշաններ կամ կրծքանշաններ: Բողոքի ակցիայի մասնակից, «Քառյակ մեղիս»-ի համասեփականատերերից Արման Սաղաթելյանը պահանջում էր հեռացնել այդ ոստիկաններին կամ կրել տարբերանշանները: *Անընդունելի է առանց տարբերանշանի ոստիկանության ծառայողների ծառայության իրականացումը հավաքների իրականացման վայրում, որը օրենքի պահանջների խախտում է:*

Հիշեցնենք, որ համաձայն [«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի](#)՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները **պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ**, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Անընդունելի է որպես ոստիկան հանդես եկողների տարբերանշաններ չկրելը: Առհասարակ հրապարակային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին, որը անխուսափելիորեն մեծացնում է վատ վերաբերմունքի և անպատժելիության ռիսկերը, վախի զգացում է առաջացնում հավաքի մասնակիցների մոտ իրենց կարծիքը հրապարակավ ներկայացնելու տեսակետից:

2021 թ. մարտի 3-ին՝ ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի օրը, [վահաններով, սաղավարտներով զինված ոստիկանական ուժերը](#) պատնեշ են կազմել և փակել Երևանի Բաղրամյան պողոտայից դեպի Դեմիրճյան փողոց տանող հատվածը: Բացի դրանից՝ ոստիկանական մեքենաներով նույն հատվածում փակել են նաև Բաղրամյան պողոտան: Մեծ քանակի ոստիկանական ուժեր են եղել նաև ԱԺ-ի շենքի ներսում, այդ թվում մուտքերի մոտ: [ԱԺ պատշգամբներում դիպուկահարներ էին](#) տեղաբաշխված եղել, ԱԺ բակում տեղադրվել են լուսաձայնային նռնակներ, ավտոմատներով զինված ոստիկաններ են շրջում: 2021 թ. մարտի 9-ին՝ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հրաժարականը պահանջով կազմակերպված հանրահավաքի օրը, նույնպես [ոստիկանական հսկայական ուժեր էին բերվել ԱԺ-ի մոտ](#), ոստիկանները վահաններով և սաղավարտներով էին:

Նույն [ուժեղացված հսկողություն](#) էր իրականացվում, [դիպուկահարների ներգրավմամբ](#) նաև 2021 թ. մարտի 13-ին ԱԳՆ շենքի մոտ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցի օրը: 2021 թ. մարտի 17-ին՝ Նիկոլ Փաշինյանի՝ ԿԳՄՄ նախարարություն այցի օրը, նույնպես ոստիկանության ծառայողները [«շրջապատել էին նախարարության շենքը»](#): Փակել էին նաև երկու կողմից Վազգեն Սարգսյանի փողոցը՝ փաստացի խոչընդոտելով անձանց ազատ տեղաշարժը:



Աղբյուրը՝ www.news.am

Ո՞րն է նման ուժեր կենտրոնացնելու նպատակը, ու՞մ են թիրախավորում դիպուկահարները, ու՞մ դեմ են կիրառվելու ձայնային նոնակները: Արդյո՞ք այդ բոլոր գործողությունները հնարավոր հավաքների մասնակիցներին ահաբեկելու նպատակ ունեն:

Օրինակ՝ 2021 թ. հուլիսի 17-ի առավոտյան ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը և Հայաստանի երիտասարդական միությունը նախատեսում էին իրականացնել խաղաղ իրազեկման ակցիա կառավարության շենքի առջև, սակայն մեծ քանակությամբ կուտակված [նստիկանական գորքերը անհիմն կերպով բերման են ենթարկել երիտասարդներին](#), այդ թվում՝ ՆԱՌԻՄ ատենապետ Տարոն Ղազարյանին, ուսանողական միության անդամներ Գառնիկ Մելքումյանին, Վարդան Գալստյանին:

Նշենք, որ երիտասարդները դեռ չէին հասել կառավարության շենքի մոտ, սակայն կարմիր բերատավորները և նստիկանության ծառայողները սահմանափակել են նրանց ազատ տեղաշարժի իրավունքը, այնուհետև՝ բերման ենթարկել:

2021 թ. հուլիսի 17-ին [բերման է ենթարկվել](#) նաև «Հայաստան» դաշինքի անդամ, պատգամավորության թեկնածու Գեղամ Նազարյանը. «Երբ իջա ավտոմեքենայից և քայլեցի այստեղ, նկատեցի, որ երեք նստիկան («Կարմիր բերետավորներ») կոպիտ կերպով մի աղջկա են բերման ենթարկում և հեզնանքով ասացի, որ ամեն ինչ «ճիշտ» են անում: Այս միջադեպից որոշ ժամանակ անց կարմիր բերետավորների 3-4 սպա վազեց դեպի ինձ և հարձակվեց վրաս: Նրանցից մեկն ասաց՝ **արա այնպես, որ գլուխը գետնին խփես**: Հետո ևս 15-20 նստիկան հավաքվեց և ինձ տարավ նստիկանության Մաշտոցի բաժին:

Այսինքն՝ նստիկանության ծառայողները ոչ միայն անհրաժեշտ չեն համարում ներկայացնել անձանց բերման ենթարկելու հիմքերը, ինչը օրենքի պահանջ է, այլև մտադրված ֆիզիկական բռնություն կիրառելու և առողջությանը կամ նույնիսկ կյանքին սպառնացող գործողություն կատարելու հրահանգ են տալիս, ինչն ակնհայտ ապօրինի հրաման է, ինչ էլ իր հերթին առնվազն քրեորեն պատժելի արարք է:

2021 թ. հուլիսի 26-ին՝ Հաց բերողի հիշատակի օրը, մի խումբ քաղաքացիներ ակցիա էին կազմակերպել Երևանի Հյուսիսային պողոտայում: Նրանք արկղով հաց էին դրել և նստիկանների դիտարկմանը, որ հաց են բաժանում՝ վստահեցրին, որ չեն բաժանում: Ոստիկանության ծառայողները որոշ ժամանակ անց [բերման ենթարկեցին հանգիստ կանգնած մասնակիցներից 2-ին](#):

Այս դեպքում ևս անհասկանալի է, թե ինչ հիմքով բերման ենթարկվեցին 20 հոգուց ավել մարդկանց մասնակցությամբ ակցիայի հենց այդ 2 մասնակիցները: Ոստիկանության նշված գործողությունները իրավական առումով որևէ հիմնավորում չունեն, անկանխատեսելի են օրենքի տրամաբանության տեսակետից, կամայական են, որն առաջացնում է անվստահություն՝ նստիկանության վարքագծի անկանխատեսելիությամբ պայմանավորված:

2021 թ. հոկտեմբերի 7-ին Կառավարության դիմաց բողոքի ակցիա էին իրականացնում ՀՅԴ երիտասարդները: Ակցիայի կազմակերպիչների հետ կապ են հաստատել նստիկանությունից ու ասել, որ [էթե ակցիայի ընթացքում օգտագործվի բարձրախոս \(ռուպր\)՝ մասնակիցներին բերման ենթարկեն](#): Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԱԾ «Հայաստան»

խմբակցության պատգամավոր, ՀՅԴ անդամ Քրիստինե Վարդանյանը: Ուշագրավ է, որ ակցիայի ընթացքում [բարձրախոսով տղային մոտեցան ոստիկանության աշխատակիցները և բերման ենթարկեցին](#) նրան՝ ասելով, որ խաթարում է հասարակական կարգը: Կարմիր բերետավորները հենց [լրագրողներին հարցազրույց տալու պահին բերման ենթարկեցին](#) նաև ՀՅԴ-ական երիտասարդին, որը չունեի բարձրախոս, թույլ չտալով ավարտել խոսքը:

Իրավական ո՞ր նորմով է կարգավորվում բարձրախոսի արգելքը հանրային միջոցառումների ժամանակ: Ո՞րն էր բարձրախոսով խոսող երիտասարդին բերման ենթարկելու հիմքը: Ո՞րն էր լրագրողների հետ զրուցող երիտասարդին բերման ենթարկելու հիմքը: Հարցադրումներ, որոնք որևէ իրավական հիմնավորում չունեն և որոնք դիտարկվող տարվա ընթացքում բազմիցս արձանագրվել են ոստիկանության գործողությունների ժամանակ: Նման վարքագծի համադրումը՝ Կառավարության օրենսդրական նախաձեռնությունների հետ (մասնավորապես՝ «Ծանր վիրավորանք» հոդվածի ներմուծումը քրեական օրենսգիրք) հիմք է տալիս եզրահանգելու, որ ոստիկանությանը հրահանգ է տրված թույլ չտալու ՀՀ քաղաքացիներին հնչեցնելու իրենց՝ թեկուզ սուր քննադատական կարծիքն ու խոսքը: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ 2021 թ. ոստիկանությունը հատուկ թիրախավորել է ՀՀ քաղաքացիների խոսքի ազատության ու կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքները, որոնք ունեցել են սուր քննադատական բովանդակություն Կառավարության, վարչապետի գործունեության վերաբերյալ:

2021 թ. նոյեմբերի 10-ին Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «Հանրային» հեռուստաընկերության եթերում հայտարարեց, որ ադրբեջանական կողմը հայկական կողմին տեղեկացրել է, որ Գորիս-Կապան ճանապարհի հատվածում կտեղադրի մաքսակետեր: 2021 թ. նոյեմբերի 11-ի առավոտյան ընդդիմությունը բողոքի ակցիա է կազմակերպել կառավարության շենքի մոտ: Կառավարության շենքի մոտ կենտրոնացված ոստիկանական ուժերը խոչընդոտել են ՀՀ քաղաքացիների՝ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը, [անհամաչափ ուժ են կիրառել նրանց նկատմամբ](#): Կառավարության մոտից ոստիկանության բաժիններ [բերման է ենթարկել 33 քաղաքացի](#): Ոստիկանության ծառայողները [խոչընդոտել են նաև ընդդիմադիր պատգամավորների մուտքը](#) Կառավարության շենք:



Ադրբուրը՝ photolure

«ՖԻԳՐՈՒՈՂՈՎ»

2021 թ. օգոստոսի 20-ից Ալիխանյան եղբայրներ փողոցի 6/1 հասցեում («Ֆիգուրոուկ») ՀՀ քաղաքացիները [բողոքի ակցիա էին կազմակերպել](#)՝ տարածքում բարձրահարկ շենքի կառուցման դեմ:

Ինչպես երևում է ՋԼՄ տեսագրություններից, օգոստոսի 20-ին ոստիկանության ծառայողները [բռնության կիրառմամբ բերման են ենթարկում](#) ակցիայի մասնակիցներին, [արհամարհական ձևով և տոնայնությամբ են խոսում](#) ՀՀ քաղաքացիների հետ, սրամտում (օրինակ՝ [«ԱՊՊԱ կանչեք»](#)):

*Նշենք, որ ներգրավված էր նաև քաղաքացիական հագուստով «ծառայող», որը նույնիսկ հարկ չի համարել ՀՀ քաղաքացիների հետ խոսելիս հանել արևային ակնոցները: Հիշեցնենք, որ հասարակական կարգ պահպանող ոստիկանները (ի դեպ՝ Ոստիկանության Մաշտոցի բաժնի Սամվել անունով ծառայողն ինքը նշեց, որ ինքը հասարակական կարգ է պահպանում)՝ համաձայն [«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի](#)) պարտավոր են կրել սահմանված ձևի **համազգեստ**, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Առհասարակ հրապարակային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին, որը անխուսափելիորեն մեծացնում է վատ վերաբերմունքի և անպատժելիության ռիսկերը, վախի զգացում է առաջացնում հավաքի մասնակիցների մոտ իրենց կարծիքը հրապարակավ ներկայացնելու տեսակետից:*

2021 թ. օգոստոսի 21-ին շարունակվել են նախորդ օրը սկսված բողոքի ցույցերը: Ոստիկանության ծառայողներն իրենց հերթին շարունակել են խոչընդոտել խաղաղ ակցիան, [անհամաչափ ուժ գործադրել և բերման ենթարկել անձանց](#): Արձանագրվել է նաև ոստիկանության ծառայողների կողմից **անչափահասի առողջությանը վնաս պատճառելու դեպք**. [«ոստիկանները բռունցքով հարվածել են 16-ամյա երիտասարդի փորին](#), որի արդյունքում որովայնի շրջանում ուժեղ (չնահանջող) ցավեր են առաջացել նրա մոտ: Այս մասին գրառում է կատարել «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ղեկավար Դանիել Իոաննիսյանը: Նշենք, որ «Ֆիգուրոուկում» դեպքերի վերաբերյալ մշտադիտարկված ՋԼՄ-ների տեղեկությունները գլխավորապես հիմնված են ակցիայի մասնակիցների ֆեյսբուքյան գրառումների և տեղադրված տեսանյութերի վրա:



Աղբյուրը՝ www.panorama.am

Բերման ենթարկված քաղաքացիներից մեկը, մասնավորապես, նշել է, որ իրեն բերման է ենթարկել Ոստիկանության 4-ից ավելի ծառայող: Ընթացքում կոտրվել է իր բջջային հեռախոսը, ստացել է մարմնական վնասվածքներ (որովայնը և ոտքը) իսկ հագուստը պատռվել է, և իրեն բերման են ենթարկել տաքատը վրայից ամբողջությամբ ընկած վիճակում՝ արժանապատվությունը նվաստացնող եղանակով ու չեն թույլատրել հագնել այն: Բերման ենթարկվելու ընթացքում Ոստիկանության ծառայողներին խնդրել է թույլ տալ, որպեսզի ինքնակամ գնա դեպի ոստիկանական մեքենան, սակայն թույլ չեն տվել, դեպի մեքենան են տեղափոխել բռնություն գործադրելով: Ըստ ահազանգերի՝ տեղում շինարարության դեմ բողոքի ակցիա են իրականացնում քաղաքացիներ: Սակայն Ոստիկանության ծառայողները քաղաքացիների նկատմամբ գործադրում են բռնություն, առանց հիմքերի բերման են ենթարկում Ոստիկանություն: Ըստ ահազանգերի ու հրապարակումների՝ ոստիկանների գործողությունների պատճառով «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն է տեղափոխվել 2 քաղաքացի: Բնակիչների նկատմամբ ոչ համաչափ ուժի կիրառման և անհարգալից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին են բարձրաձայնել նաև [«Ֆիզգարադոկ» այցելած Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները](#), որոնք հանդիպել են հարակից բնակիչների և նրանց փաստաբանի հետ:

Իրավապահ համակարգում հնարավոր խոշտանգումները, վատ վերաբերմունքը և ՀՀ քաղաքացիների նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կանխարգելելու տեսանկյունից կարևոր և անհրաժեշտ է պատասխանատվության ենթարկել այն բոլոր ոստիկաններին, որոնք բռնություն են կիրառել խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ և ապօրինի կերպով բերման են ենթարկել ոստիկանության բաժանմունք, բաժանմունքում բռնություն գործադրել, ինչպես նաև նրանց հրաման տվող պաշտոնյաներին:

ԽՈՍՏՔԻ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԾԻՔՆ ԱԶՍՏ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նշենք, որ 2021 թ. աննախադեպ էր խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքների խախտման առումով:

Մի շարք դեպքերում ոստիկանության ծառայողները պատշաճ նախաձեռնող չեն եղել իրավիճակների գնահատման, քննման, հնարավոր և ակնհայտ իրավախախտումների կանխման հարցում, սակայն նախաձեռնող և ակտիվ էին իշխանության հասցեին ցանկացած սուր քննադատության և/կամ «ծուռ բառ» արտաբերող ՀՀ քաղաքացիների նկատմամբ:

Մասնավորապես՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած երթի ընթացքում 2021 թ. փետրվարի 25-ին, միջադեպ տեղի ունեցավ Երևանի Գարեգին Նժդեհի փողոցում: Նիկոլ Փաշինյանը ոգևորված ողջունում էր շենքերի որոշ պատշգամբներից իրենց սատարողներին, երբ անսպասելիորեն նրանցից մեկը բղավեց՝ «արի ստեղ հլը արա», Նիկոլ Փաշինյանն անակնկալի եկավ և այդ քաղաքացուն սաստողներին ասաց՝ «հանգիստ», ապա դիմեց քաղաքացուն. **«[Քո հետևից կգամ](#)»**: 2021 թ. փետրվարի 27-ին [Yerkir.am](#)-ի տեղեկություններով՝ նշված [երիտասարդին ծեծել են](#)՝ պատճառելով մարմնական

վնասվածքներ: *Արդյո՞ք ոստիկանության ծառայողները քննել են այս երկու դեպքերի պատճառահետևանքային կապը:*

Ոստիկանության ծառայողները հետապնդել են «Նիկոլ դավաճան» բղավող անձին [Արմավիրում](#) և ուժ գործադրելով բերման են ենթարկել Նիկոլ Փաշինյանի դեմ ուղղված վանկարկումների համար մեկ այլ քաղաքացու [Էջմիածնում](#):

2021 թ. օգոստոսի 27-ին կարմիրբերետավորները Կառավարության մոտից [բերման ենթարկեցին մի երիտասարդ տղայի](#) այն բանի համար, որ նա փողոցում գոռում էր «Նիկոլ, հեռացիր»: *Նշենք, որ կարմիրբերետավորները հետապնդում էին երիտասարդին: Ավելին՝ նրանք հրաժարվեցին News.am-ի լրագրողին ներկայացնել և ըստ այդմ՝ հանրությանը ներկայացնել իրենց գործողությունների հիմքերը:*

Նշենք, որ «Սերժիկ, հեռացիր» վանկարկումը եղել է Նիկոլ Փաշինյանի քայլարշավի և 2018 թ. բողոքի ցույցերի հիմնաքարային արտահայտություններից մեկը, և նաև նրա տիկինը՝ Աննա Հակոբյանը 2018 թ. ապրիլի 22-ին իր ելույթն ավարտել է [«Սերժիկ, հեռացիր» վանկարկումներով](#):

2021 թ. սեպտեմբերի 21-ին ոստիկանները «Եռաբլուր» զինվորական պանթեոնից [բերման ենթարկեցին զոհված զինծառայող Լևոն Գալստյանի հորը](#)՝ Արմեն Գալստյանին: Մինչ այդ՝ նա լրագրողների հետ հանգիստ գրուցում էր, պատմում էր, թե ինչպես է որդին 2020 թ. նոյեմբերի 23-ին և 24-ին զանգել իրեն, ասել, թե որտեղ են թաքնվում: Իսկ արդեն 2020 թ. նոյեմբերի 27-ին ադրբեջանցիները հանձնել են որդու և նրա ընկերների դիակները:

[ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ](#)

Լրագրողների՝ մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտվել է 13 դեպքում՝ (6 դեպք արձանագրվել է հավաքների ընթացքում, 7 դեպքն անհատական բնույթի էր): Նշենք, որ 2020 թ. ընթացքում արձանագրվել է նման խախտման 6 դեպք: Այսինքն՝ լրագրողների՝ մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքերն աճել են ավելի քան 50%-ով: Լրագրողների նկատմամբ, մասնավորապես, ոստիկանության ծառայողների կողմից կիրառվել է բռնություն, չի ապահովվել նրանց անխափան և անվտանգ աշխատանքը հանրային միջացառման վայրում, ընտրողական վերաբերմունք է դրսևորվել պետական պաշտոնյաների մասնակցությամբ միջոցառումների լուսաբանման ժամանակ:

2021 թ. ապրիլի 8-ին անհետ կորածների հարազատները [փակել էին ՊՆ շենքի մուտքը](#): Այդ օրը ոստիկանության ծառայողները թույլ չէին տալիս լրագրողներին նկարահանում իրականացնել, մինչդեռ հաջորդ օրը՝ 2021 թ. ապրիլի 9-ին, լրագրողները լուսաբանում էին դեպքերը նույն վայրից: *Այսինքն՝ որևէ հիմնավորում՝ արգելելու լրագրողների աշխատանքը, չկար, և ոստիկանության ծառայողների որոշումը կամայական ու անկանխատեսելի էր:*

Բռնություն են գործադրել լրագրողների նկատմամբ.

Կառավարության 3-րդ մասնաշենքի մոտ անհնազանդության ակցիայի մասնակիցներին բերման ենթարկելիս ոստիկանները գետնին են տապալել օպերատորներից մեկին: Տեսանյութում երևում է, թե ինչպես քաղաքացիներից մեկի թեւերից բռնած բերման

ենթարկելիս ոստիկանն ակնհայտորեն հրում է իր առջեւ կանգնած եւ նկարահանում իրականացնող օպերատորին: Վերջինս կորցնելով հավասարակշռությունը տապալվել է գետնին:

Ոստիկանության ծառայողները նաև [անգործություն են դրսևորել](#) լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտողների դեպքում: Մասնավորապես՝ հունիսի 3-ին ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանը փողոցում [ուժով խլել է իրեն մտեցած «Հրապարակ» օրաթերթի լրագրող Անուշ Դաշտենցի հեռախոսը](#) և նստել մեքենան ու հեռացել: Դեպքի վերաբերյալ հրապարակում է արվել թերթում՝ դիմելով ոստիկանությանը՝ դիտարկել հրապարակումը որպես հանցագործության մասին հաղորդում, սակայն ոստիկանությունը որևէ գործողություն չի ձեռնարկել և պատգամավորին պատասխանատվության չի կանչել նվազագույնը Քրեական օրենսգրքի 164-րդ (լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու) և/կամ 176-րդ (կողոպուտ) հոդվածներով:

Չեն միջամտել և չեն կանխել ոչ միայն լրագրողների աշխատանքը խոչընդոտողների, այլև նաև նրանց նկատմամբ բռնություն գործադրողների գործողությունները: Ավելին՝ երբ լրագրողը դիմել է ոստիկանության ծառայողին՝ ապահովելու իր անխափան աշխատանքն ու անվտանգությունը, ոստիկանության ծառայողը պատասխանել է, որ իրենք ծառայություն են իրականացնում: Tert.am-ի թղթակցի աշխատանքը Արարատի մարզում պարբերաբար խոչընդոտել են, սակայն ոստիկանության ծառայողները չեն միջամտել՝ ապահովելու համար լրագրողների անխափան աշխատանքը ([Լրագրողի ձեռքից նաև խլել են հեռախոսը](#)):

Հարկ ենք համարում հիշեցնել, որ հանրային միջոցառումների ժամանակ ծառայություն իրականացնողի պարտավորությունն է ոչ միայն հավաքի մասնակիցների, այլև լրագրողների անվտանգության ապահովումը:

2021 թ. նոյեմբերի 9-ին NEWS.am-ի նկարահանող խմբին [թույլ չեն տվել բարձրանալ «Եռաբլուր» զինվորական պանթեոն](#), քանի որ այդ պահին այնտեղ է գտնվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այդ նույն վայրում գտնվել են մեծաթիվ ոստիկաններ, թիկնապահներ, որոնք փակել էին «Եռաբլուր» պանթեոն տանող բոլոր ելքերն ու մուտքերը: [Միայն վարչապետի ավտոշարասյան հեռանալուց հետո](#) են լրագրողներին թույլ տվել բարձրանալ «Եռաբլուր» պանթեոն:

Այսպիսով՝ ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառումը, բռնի և կամայական բերման ենթարկելու գործողություններն ինչպես ակցիաների մասնակիցների, այնպես էլ դրանք լուսաբանող լրագրողների նկատմամբ, վկայում են ոստիկանությունում համակարգային խնդիրների առկայության մասին, որոնք այդպես էլ լուծում չեն ստանում: Ոստիկանական համակարգը, չնայած հռչակված բարեփոխման ռազմավարության, փաստացի այդպես էլ արմատական փոփոխության չենթարկվեց, և ծառայողներն այդպես էլ խաղաղ հավաքների ազատության իրավունքի ապահովման և անհրաժեշտության դեպքում այդ հավաքների խաղաղ բնույթը խոչընդոտող անձանց նույնականացնելու հմտություններ ձեռք չբերեցին: Բերման ենթարկելու դեպքերը շարունակում են կրել կամայական բնույթ, ուժի կիրառումը անհամաչափ է, ոստիկանության պարզաբանումները՝ հակասական:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

2021 թ. հունիսի 20-ին Հայաստանում տեղի ունեցան ԱԺ արտահերթ ընտրություններ, իսկ հոկտեմբերի 17-ին, նոյեմբերի 14-ին և դեկտեմբերի 5-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ ՀՀ մի շարք մարզերում:

2021 թ. հունիսի 21-ին Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը իր հրապարակած «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ [հայտարարությամբ](#)» եզրակացրել էր, որ ընտրությունները «...բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մրցակիցների կողմից գործածվող աճող սադրիչ հռետորաբանությամբ»: Արձանագրենք, որ նույն տրամադրությունն է նկատվել նաև լրատվական դաշտում:

Ոստիկանության ծառայողներն ակտիվորեն ներգրավված են եղել ինչպես քարոզարշավի, այնպես էլ ընտրությունների անցկացման և հետընտրական փուլերում և նրանց գործողությունները ոչ միշտ են եղել համաչափ և օրինական: Ընտրությունների համատեքստում ըստ ԶԼՄ-ների հրապարակումների արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 14 դեպք: ***Դիտարկվող ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):***

Ոստիկանության վարչական ռեսուրսը լայնորեն օգտագործվել է նախընտրական քարոզարշավի ժամանակ: Մասնավորապես մեծ թվով [նստիկանական ուժեր են ուղեկցել](#) Նիկոլ Փաշինյանին մարզային այցելությունների ժամանակ, [փակում էին փողոցները](#), խոչընդոտելով անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Մի շարք ԶԼՄ-ներ տեղեկություն են տարածել, որ ընտրություններին ընդառաջ՝ մարզային և քաղաքային ոստիկանության բաժանմունքները բացում են իրենց բնակավայրի՝ հեղինակություն վայելող անձանց (գործարար, ուսուցիչ, դպրոցի տնօրեն և այլն) անձնական գործերը, կապվում են նրանց հետ և ասում, որ կա պահանջ, որ գալիք ընտրություններին պետք է աշխատեն վարչապետի օգտին և [սպառնալիքներով ձայների անհրաժեշտ քանակ, թե ինչպես պետք է իրենց պահեն այս փուլում](#): [News.am-ի համաձայն](#), Փաշինյանի օգտին նախընտրական քարոզչություն է իրականացնում և կոնկրետ համայնքներում գաղտնի շտաբային աշխատանքներ համակարգում ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ Վարդան Վարդանյանը:

Ազգային ժողովի 2021 թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախօրեին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ահազանգել են փաստաբաններ, որոնք տեղեկացրել են, որ ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները բերման են ենթարկել «Հայաստան» դաշինքի, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 5 համակիրների, որոնց հետ [փաստաբաններին թույլ չեն տալիս տեսակցել](#): Ավելին՝ ՄԻՊ ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ ոստիկանները բերման ենթարկված կանանցից մեկի նկատմամբ բերման ենթարկելիս ու բաժնում գտնվելու ընթացքում գործադրել են օրենքով արգելված վերաբերմունք: Մասնավորապես՝ կանանցից մեկին բերման են ենթարկել իր չափահաս որդու հետ միասին: Բերման ենթարկելիս կնոջը չի ներկայացվել որևէ պատճառ, նրան քաշքշել են և մի քանի ոստիկաններով հարկադրաբար մեքենայով բերման ենթարկել բաժին: Բաժնում նշված կնոջը պարբերաբար վիրավորել ու հայիոյել են, պահանջել են գրել այն, ինչ կասեն ոստիկանության ծառայողները: Այնուհետև կնոջը սպառնացել են, որ իր հետ բերման ենթարկված որդու նկատմամբ կհարուցեն քրեական գործ ու կազատազրկեն, եթե ցուցմունքներ չտա՝ ոստիկանների նշած հարցերի շուրջ: Ոստիկանության ծառայողներն արհամարհական և [անհարգալից են խոսել նաև փաստաբանների հետ](#):

Այսինքն՝ ոստիկանության ծառայողները խախտել են անձի անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, իրավաբանական օգնություն ստանալու, արդար դատաքննության իրավունքները: Ավելին՝ փորձել են ցուցմունքներ վերցնել սպառնալիքների կիրառմամբ:

Ընտրությունների օրը ևս ոստիկանության ծառայողները եղել են գործողությունների թատերաբեմում: Մասնավորապես՝ նրանք [ոչ ծառայողական մեքենայով](#) ուժի կիրառմամբ բերման են ենթարկել «Հայաստան» դաշինքի Փարաքար համայնքի շտաբի պետին:

2021 թ. հոկտեմբերի 17-ին՝ Գորիսում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների օրը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ են ներկայացվել մի շարք ահազանգեր այն մասին, որ [Ոստիկանության մեծարանակ ծառայողներ են ժամանել «Առուշ Առուշանյան» դաշինքի Գորիս քաղաքի շտաբի մոտ](#), և ոստիկանների մի մասը մուտք է գործել շտաբ, ինչպես նաև տևական ժամանակ է, ինչ փակել է շտաբի մուտքը: Ահազանգերի համաձայն՝ ոստիկանները պարզաբանել են, որ պետք է հարուցված քրեական գործի շրջանակում դատարանի որոշման հիման վրա շտաբում իրականացնեն խուզարկություն, բայց ըստ ահազանգի՝ դատարանի որոշումն անօրինական է:

Հետընտրական շրջանում նույնպես ոստիկանությունն անմասն չի մնացել զարգացող իրադարձություններից: 2021 թ. հուլիսի 11-ին որոտանցիները պատմել են, թե ինչպես են [իրավապահները փորձել սպառնալիքով ցուցմունք կորզել](#) վարչական ղեկավար Սուրեն Օհանջանյանի դեմ: 2021 թ. հուլիսի 24-ին [ոստիկանության ծառայողներն արգելել են](#) Սյունիքի համայնքապետերի և քաղաքական նպատակներով մյուս կալանավորվածների ազատության պահանջով ստորագրահավաքը: Հուլիսի սկզբին համացանցում տարածվել էր տեսանյութ, որտեղ երևում էր, որ ամուսիններին ցուցմունք տալու համար [ոստիկանություն](#)

[Էր տարել ՔՊ վատահիված անձ Արթուր Գյուրջյանը](#): Ավելին՝ նրանց հարցաքննել են որպես վկա Սունիքի մարզի Քարահունջ համայնքի ղեկավար Լուսինե Ավետյանի գործով: Ամուսինները «Զանգեզուր» հեռուստաընկերությանը պատմել են, որ ոստիկանությունում իրենց ձերբակալությունով վախեցրել են ու այդ կերպ ստիպել ցուցմունք տալ, որ գյուղապետարանից իրենց ստացած գումարը ոչ թե օգնություն է եղել, այլ կաշառք՝ 2021 թ. հունիսի 8-ին Գորիս քաղաքում «Հայաստան» դաշինքի կազմակերպած հանրահավաքին մասնակցելու համար: Ամուսինները բարկացած են, որ ոստիկանները ստորագրություն են վերցրել նաև իրենց տասնյոթամյա տղայից. «Ասում է գրի, գրած է, որ մաման փախուստի մեջ է, դու էլ տակը ստորագրի»:

Իրավական որևէ կարգավորում չի նախատեսում քաղաքացիական անձի ուղեկցությամբ, այն էլ նախընտրական ժամանակահատվածում իշխող քաղաքական ուժի վատահիված անձի ուղեկցությամբ այլ քաղաքացուն ոստիկանության բաժին տանելու ոստիկանական գործողությունը: Անհետևանք են մնացել նաև ոստիկանության բաժանմունքում սպառնալիքների միջոցով անձանցից խոստովանական ցուցմունք կորզելու վերաբերյալ հեռուստաընկերությամբ ամուսինների տարածած տեղեկությունները: Սյունիքի մարզում իրադարձությունների զարգացումները, տարբեր համայնքների ղեկավարներին ձերբակալելու և գործ հարուցելու դեպքերի համատեքստում ոստիկանության նման գործողությունները լրացուցիչ հարցեր են առաջացնում հանրության շրջանում ոստիկանների գործողությունների իրավաչափության և համաչափության վերաբերյալ, հատկապես նախընտրական ժամանակահատվածում, որոնք իրենց բովանդակությամբ քաղաքական գործընթացներ են:

Ոստիկանության ծառայողները ներգրավված էին նաև ավագանու կազմավորման գործընթացներում: Օրինակ՝ [համաձայն epress.am կայքի](#)՝ 2021 թ. դեկտեմբերի 22-ին Թալինում, որտեղ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը բավարար ձայներ չէր հավաքել համայնքապետ առաջադրելու համար, ոստիկանության ծառայողները փաստացի համայնքապետ առաջադրված Կարեն Գրիգորյանի՝ Ռուսաստանում հետախուզման մեջ գտնվող հարազատին «նիստի ողջ ընթացքում...» (որի ժամանակ Կարեն Գրիգորյանը պետք է հրաժարվեր իր թեկնածությունից) «...Թալինի հրապարակում պահել են, որ ոչ մի տեղ չգնա: Ուժայինները, ընդդիմադիրների պնդմամբ, շրջապատել են նաև համայնքապետարանը՝ ներս չթողնելով անգամ լրատվամիջոցներին»:

Այսինքն՝ ոստիկանության ծառայողները ոչ միայն միջամտել են նախընտրական գործընթացներին, այլև անգործություն են դրսևորել հանցագործության կատարման մեջ մեղադրվող ու հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՅՈՒՆԻՔՈՒՄ

2021 թ. ապրիլի 21-ին Նիկոլ Փաշինյանի՝ Սյունիք կատարվելիք այցից մեկ օր առաջ [փոխվում են մարզի ոստիկանապետը](#), նրա տեղակալը և Գորիսի ոստիկանապետը: Այցի օրը [հարյուրավոր ոստիկաններ Երևանից ուղևորվել են Սյունիք](#): [NEWS.am](#)-ի թղթակիցը

Երասխում նկարահանել է ոստիկաններով լի ավտոբուսները: 2021 թ. ապրիլի 22-ին՝ այցի օրը, բողոքի ակցիաներ էին կազմակերպվել ինչպես Սյունիքի մարզում և Երևանում, այնպես էլ մայրուղիների վրա: Ոստիկանության ծառայողները նույնիսկ դիմել են «կանխարգելիչ» գործողությունների: Նրանք Արարատի մայրուղուց [բերման են ենթարկել Փաշինյանի հրաժարականը պահանջող մի շարք քաղաքացիների](#), որոնք պատրաստվում էին «դիմավորել» նրան: Ավելին՝ տարածված տեղեկության համաձայն՝ Սյունիքի մարզ այցելած Նիկոլ Փաշինյանին մարզի մի քանի համայնքներում՝ Մեղրիում, Ագարակում, Կապանում բնակիչները դիմավորել են հայիոյանքներով, «դավաճան» «թուրք», «կապիտուլյանտ» վանկարկումներով: Ճանապարհը փակած բնակիչների պատճառով Փաշինյանը չի կարողացել Քաջարան մտնել:

2021 թ. ապրիլի 21-ին Նիկոլ Փաշինյանը Սյունիքի մարզպետարանում խորհրդակցության ժամանակ անդրադարձել է «Մեղրիում տեղի ունեցած միջադեպին».

«Ուզում եմ անդրադառնալ նաև այսօր Մեղրիում տեղի ունեցած միջադեպին: Հստակ է, որ տեղի է ունեցել օրենքի խախտում, և ես ակնկալում եմ, որ հանրապետության իրավապահ մարմինները շատ հստակ և կոշտ կերպով կարձագանքեն, որովհետև չի կարելի թույլ տալ, որ [մարդկանց փոքր խմբակ ուղղակի ստեղծի տպավորություն](#)»:

Հաջորդիվ ՀՀ գլխավոր դատախազությունը Սյունիքում կատարված դեպքերի առնչությամբ [նստիկանությանը հանձնարարել է](#) քրեադատավարական կարգով վարույթ իրականացնել: 2021 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցած դեպքերի առնչությամբ [հարուցվել է քրեական գործ](#)՝ ՀՀ ՔՕ 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (խուլիգանության), 316-րդ հոդվածի 1-ին մասի (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հատկանիշներով: *Նշենք, որ ոչ ոստիկանության և ոչ դատախազության պաշտոնական կայքէջերում այդ օրն իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ որևէ տեղեկություն չի հրապարակվել: Առնվազն անհասկանալի է, թե ինչ հիմքով է [հայիոյանքը](#) որակվել որպես [իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրում](#):*

Ավելին՝ 2021 թ. ապրիլի 21-ի լույս 22-ի գիշերը ոստիկանության ծառայողները, ըստ փաստաբան Գայանե Պապոյանի, «անհասկանալի պատճառաբանությամբ և հիմքերով անհայտ ուղղությամբ, ենթադրվում է՝ [նստիկանության բաժին տարան Մեղրիի քաղաքապետ Մխիթար Զաքարյանին](#)»: Գայանե Պապոյանի հրապարակած տեսանյութում երևում է, որ նա առաջարկում է՝ կամ ինքն ու իր պաշտպանյալը իրենց մեքենայով գան, կամ ինքը նստի իր պաշտպանյալի՝ Մխիթար Զաքարյանի հետ ոստիկանական մեքենան, սակայն երկու դեպքում էլ մերժում է ստանում: Ոստիկանները որևէ կերպ չեն հիմնավորում իրենց գործողությունները: 2021 թ. ապրիլի 22-ին ոստիկանության ծառայողները նաև [խուզարկություն են կատարել](#) Մեղրիի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի տանը: Խուզարկություններ ու [ձերբակալություններ են իրականացվել նաև Գորիսում](#): Ոստիկանության ծառայողները «[անհայտ ուղղությամբ տարել են](#) Գորիսի փոխքաղաքապետ Մենուա Հովսեփյանին ու ևս 8 հոգու, անհայտ ուղղությամբ են տարել նաև Շուռնուխի

գյուղապետի եղբորը»: Նշենք, որ, ըստ ՁԼՄ-ների, Շուռնուխի գյուղապետի եղբայրը առողջական խնդիրներ ուներ, և իրավապահները, [անտեսելով նրա առողջական վիճակը](#), ձեռնաշղթաներ են հագցրել անձին և առանց հիմք ներկայացնելու՝ տարել են «անհայտ ուղղությամբ»: Ընդհանուր առմամբ 2021 թ. ապրիլի 22-ին ձերբակալվել է 52 անձ, [վեղադրանք է առաջադրվել](#) 19 անձի: *Նշենք, որ ՀՀ [փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը](#) լրագրողների հարցին, թե ինչ անհետաձգելի գործողություններով էին պայմանավորված գիշերվա ձերբակալությունները, չի ներկայացրել կոնկրետ այդ անձանց բերման ենթարկելու հստակ պատճառը:*

2021 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2021 թ. ՁԼՄ հրապարակումներով արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 51 անհատական դեպք: Հիմնականում խախտվել են անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ 21 դեպք, ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ 16 դեպք, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը 14 դեպքում և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը 12 դեպքում (39,5%): Խախտվել են նաև առողջության, իրավաբանական օգնություն ստանալու, արդար դատաքնության, խոսքի ազատության և կարծիքն ազատ արտահայտելու, սեփականության իրավունքները:

Անհատական բնույթի 51 դեպքերից 42-ը տեղի է ունեցել քաղաք Երևանում, 2-ը՝ Արարատի մարզում, մեկական դեպք՝ Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում: Երկու դեպք պայմանականորեն համարել ենք ՀՀ ամբողջ տարածքը՝ պայմանավորված ոստիկանությունն ուժեղացված ռեժիմով ստուգումներ է իրականացնում Երևանում և մարզերում: Մեկ դեպքում վայրի վերաբերյալ նշում չի եղել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը, ըստ խախտված իրավունքի, առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):

ԾԱՆԸ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ VS ԽՈՇԱՆԳՈՒՄԸ

2021 թ. հուլիսի 30-ին Հայաստանի քրեական օրենսգիրքը լրացվեց [«Ծանր վիրավորանքը» հոդվածով](#), որով քրեորեն պատժելի արարք համարվեց անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը: Փոփոխությունն ուժի մեջ է մտել 2021 թ. օգոստոսի 30-ին: Նշենք, որ [Դատախազությունը հայտնել է](#), որ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածն ուժի մեջ մտնելուց ի վեր՝ 2021 թ. օգոստոսի 30-ից մինչև 2022 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է նշված հոդվածի հատկանիշներով հանցավոր արարքների 418 դեպք: 214 քրեական գործերով նախաքնությունը շարունակվում է, իսկ 8

քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցով ընթանում է դատական քննություն: ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար մեղադրանք է առաջադրվել ընդհանուր 31 անձի:

Օրենքը քննադատեց Freedom House-ը՝ Հայաստանի իշխանություններին կոչ անելով անհապաղ դադարեցնել դրա կիրարկումը, նշելով, որ այն «...խորհրդանշում է ժողովրդավարական նորմերի ակնհայտ հետընթաց Հայաստանում՝ ներառյալ խոսքի ազատությունը»:

Նշենք, որ ոստիկանությունը եղել է այս գործընթացում ներգրավված գլխավոր դերակատարներից. ոստիկանության ծառայողները սոցիալական ցանցերում գրառումների համար հրավիրում էին ոստիկանության բաժանմունքներ, այցելում բնակարան, ձերբակալում: Ոստիկանության գործողությունները նաև ընտրողական բնույթ էին կրում. օրինակ՝ «Ադելվադ» միաբանության ղեկավար Արթուր Դանիելյանին քերման են ենթարկել մի գրառման համար, սակայն, երբ նա ասել է, որ գրված հայհոյանքն ուղղված է եղել Ալեն Դելունին, նրան բաց են թողել:

Ըստ այդ տրամաբանության՝ կան անձինք, ում վերաբերյալ թույլատրելի է հայհոյանք պարունակով հրապարակումներ անել:

*Այսինքն՝ ոստիկանության ռեսուրսն ակտիվորեն ուղղվել է իշխանության գործունեության նկատմամբ տեսակետներ և կարծիքներ հնչեցնելու (խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքները) ՀՀ քաղաքացիների իրավունքը սահմանափակող օրենքի կատարմանը, այն դեպքում երբ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտումների փաստերով նույն ջանադրությունը չի երևում պատշաճ քննություն և հետապնդում իրականացնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ մտահոգիչ և խնդրահարույց է խոշտանգման դեպքերով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու փաստերը: Նշենք, որ ՀՔԱՎ գրասենյակը մասնակցում է Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի Խոշտանգումների դեմ պայքարի աշխատանքային խմբի՝ **խոշտանգումների արգելքի համաթվի** կազմմանը: Համաձայն տվյալների՝ 2020 թ. խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի արժանանալու փաստի առթիվ ՀՔԾ-ն քննել է ընդամենը 95 քրեական գործ, որոնցից ընդամենը 6 քրեական գործ է ուղարկվել դատարան: Մեծ մասը կարճվել է կամ կասեցվել:*

Ինչ վերաբերում է 2021 թ. խոշտանգման դեպքերին և դրանց քննությանը, նշենք, որ իշխանությունները կանխման և բացահայտման ցուցանիշները բարձրացնելու փոխարեն օրենսդրական փոփոխություններով խորացնում են անորոշությունն ու հնարավոր չարաշահումների ռիսկն իրավապահ համակարգում: Մասնավորապես՝ 2021 թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով Հատուկ քննչական ծառայությունը, որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների և պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց

պաշտոնեական դիրքի հետ կապված հանցագործությունների, այդ թվում նաև՝ խոշտանգումների, քննություն իրականացնող անկախ մարմին **դադարել է գոյություն ունենալ**, իսկ խոշտանգման գործերի քննության քննչական ենթակայությունը վերապահվել է ազգային անվտանգության ծառայությանը: Նշենք, որ խնդրին անդրադարձել է [ՀՔԱՎ գրասենյակը](#) բացասական գնահատեց նախագիծը՝ մեծապես պայմանավորված փաստով, որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն [վարչապետին ենթակա մարմին է](#)»: Այսինքն՝ **Ազգային անվտանգության ծառայությունը անկախ և անաչառ մարմին համարվել չի կարող**, այն գործում է վարչապետի ենթակայության տակ, հետևաբար՝ **վերջինիս քննիչները չեն կարող ապահովել խոշտանգման գործերով գործերի քննության արդյունավետության առաջնային և կարևորագույն չափանիշը**: Նշենք, որ այս նախաձեռնությունը սուր քննադատության արժանացավ քաղաքացիական հասարակության կողմից, և ներկայումս օրենքը գտնվում է բամշակման փուլում: Համաձայն նոր կարգավորումների՝ **խոշտանգման գործերով քննությունը վերապահվելու է ՀՀ քննչական կոմիտեին**:

ԶԼՄ 2021 թ. մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև ՀՔԱՎ գրասենյակի արձանագրած դեպքերը ցույց են տալիս, որ ոստիկանության բաժանմունքներում անձանց ֆիզիկական բռնության ենթարկելու և արժանապատվությունը նվաստացնելու պրակտիկան շարունակական բնույթ է կրում: Ավելին, ոստիկանության ծառայողների բացահայտ ահաբեկող, վախի մթնոլորտ ստեղծող ակնհայտ ապօրինի գործողությունների կիրառումը չի վերացել, չնայած ոստիկանության բարեփոխումների ռազմավարության իրականացման մասին հավաստիացումներին:

Բերենք մի քանի օրինակներ:

[«Ըստ Ս. Հովսեփյանի»](#) Ոստիկանությունում իր նկատմամբ գործադրվել է բռնություն, մասնավորապես՝ Ոստիկանության ծառայողներն, իրեն աշխատասենյակ տանելով, զցել են գետնին և ոտքերով հարվածել, հետո գետնին զցած վիճակում քարշ են տվել մեկ սենյակից մյուսը և տեսանկարել քարշ տալու ընթացքը: Այդ սենյակում թույլ չեն տվել նստել, ստիպված է եղել ոտքի վրա մնալ մոտ 30 րոպե: Այդ ողջ ընթացքում իր նկատմամբ ցուցաբերվել է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, այդ թվում՝ հայիոյանքներով: Այդ ողջ ընթացքում եղել է ձեռնաշղթաներով՝ ձեռքերը մեջքի հետևում:

2021 թ. մայիսի 30-ին երեկոյան [ոստիկանները խոշտանգել են](#) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող Սամվել Հասանյանին», - այս մասին ազագանգում է փաստաբան Արայիկ Պապիկյանը: Նրա նկատմամբ բռնություն է գործադրվել ինչպես բերման ենթարկվելիս, այնպես էլ ոստիկանության Վանաձորի բաժնում. «Ոստիկանի համազգեստով կամ քաղաքացիական հագուստով բազմաթիվ անձինք նրան հասցել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ՝ գլխի, որովայնի, թևերի շրջանում: Վնասվածքները բազմաթիվ են»:

2021 թ. օգոստոսի 6-ին Հատուկ քննչական ծառայությունը որոշում է կայացրել [քրեական հետապնդում չիրականացնել և կարճել](#) Սամվել Հասանյանին

խոշտանգելու գործը: Ինչպես «Ա1+»-ին հայտնեց պաշտպան Արայիկ Պապիկյանը, կարճաման համար հիմք է հանդիսացել ոստիկանության մի շարք աշխատողների ցուցմունքները. «Դա այն նույն ձեռագիրն է, ինչը տարիներ շարունակ ՀՀ-ում գործում է և եղել է: ՀՔԾ-ում հանգել են հետևության, որ ոստիկանների ցուցմունքները ճիշտ են այն մասով, որ Հասանյանը բազմաթիվ մարմնական վնասվածները ստացել է մեքենայից իջնելու ժամանակ, երբ նրան փորձել են բերման ենթարկել և փռել են ասֆալտին»: Ինչպես նշում է փաստաբանը, «[չեն պահպանվել](#) նաև այդ օրվա ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի տեսախցիկների տեսագրությունները: Իսկ սա առաջին դեպքը չէ»:

2021 թ. հունիսի 17-ին Եղեգնաձորում Փաշինյանի հանարահավաքից առաջ «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ Շահեն Վարդանյանին ոստիկանությունը բերման է ենթարկել, ապա [ոստիկանական բաժանմունքում նրան ծեծի են ենթարկել](#)՝ «նախ քաղաքացիական հագուստով Բանզլադեշի Կարենը, ապա Եղեգնաձորի ոստիկանության բաժնի պետի տեղակալը: Քաղաքացիական հագուստով և ոստիկանական համազգեստներով հարձակվել են ինձ վրա հենց ոստիկանության մուտքի մոտ, հարվածել, զցել են գետնին, խփել են գլխիս, մարմնի տարբեր մասերին»: Հիմնականում գլխիս են հարվածել: Շահեն Վարդանյանի խոշտանգումները շարունակվել են նաև ոստիկանական բաժանմունքում: Վարդանյանը պատմեց, որ բաժնի պետի տեղակալ Արսեն Խաչատրյանը և բաժնի պետ Հրազդան Կոստանյանը խփել են իր կրծքավանդակին ու ծեծել, ապա ձեռնաշղթաներ են հագցրել և թույլ չեն տվել բժշկական հետազոտության գնալ: Դրանից հետո սկսեցին խնդրել, որ ես չբողոքեմ, ասում է՝ հո մե՞նք չենք ծեծել, ասում է՝ քաղաքացիական հագուստով անձինք էին ծեծում Ձեզ:

Նշենք, որ 2021 թ. հունիսի 17-ին [ոստիկանության ծառայողները ձերբակալել են](#) մշակույթի կենտրոնի տնօրենին՝ քաղաքացու ընտրական իրավունքին գույքային վնասի սպառնալիքով խոչընդոտելու մեղադրանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ): Գործի մշակույթի կենտրոնի աշխատակցուհիներից մեկը հաղորդում էր տվել, որ ժամը 12.00-ի սահմաններում Գործի մշակույթի կենտրոնի տնօրենը [արգելել է իրեն մասնակցելու](#) Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավին՝ սպառնալով ազատել աշխատանքից:

2021 թ. նոյեմբերի 12-ին տեսագրություն է հրապարակվել, որում երևում է, թե ինչպես են ոստիկանները կանգնեցնում մի ավտոմեքենա, դուրս հրավիրում վարորդին և ուղևորին, [անհարգալից ու սպառնալից տոնով և բառապաշարով խոսում նրանց հետ](#). «Ուտներիդ կկարեմ, արա՛, գլուխդ կզխկեմ, ա՛յ տղա»: Տեսագրությունում երևում է, որ ՀՀ քաղաքացուն սպառնում են զենքով:

Փաստորեն, ոստիկանության ծառայողները հետևողական են ընտրական իրավունքի հնարավոր խախտման դեպքերին և անձին ձերբակալում են մեկ ցուցմունքի հիման վրա, մինչդեռ ոստիկանության բաժանմունքում անձանց խոշտանգելու դեպքը բավարար կարևորություն չունեցավ որևէ մեկին ձերբակալելու համար կամ նվազագույնը ՀՔԾ-ում գործ

*հարուցելու համար: Դեպքից 12 օր հետո Hraparak.am-ի հարցին Հատուկ քննչական ծառայությունից պատասխանել են. «[Հարուցված քրեական գործ չկա](#), նյութեր են նախապատրաստվում, նշանակված է դատաբժշկական փորձաքննություն»: [Գործը հարուցվել է հուլիսի 2-ին](#)՝ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) և 309-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով): 309-րդ հոդվածի 2-րդ մասով է գործ հարուցվել նաև ՀՀ քաղաքացուն զենքով սպառնալու դեպքով: *Ակնհայտ խոշտանգման դեպքերը որպես պաշտոնեական լիազորություններ անցնելը որակելը իրավիճակն օբյեկտիվ և համաչափ գնահատելու կամքի բացակայության մասին է վկայում:**

***ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ***

2021 թ. հոկտեմբերի 13-ին Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Չոհրաբյանը հրապարակել է տեսանյութեր, որտեղ երևում է, թե ինչպես են ոստիկանները, ուժ գործադրելով, բերման ենթարկում քաղաքացուն, որոնց հրամայվում է նրան «պառկացնել, կոխել ավտոն»: Անձին բերման ենթարկելու գործողությունն իրականացվում է մի քանի տասնյակ ոստիկանների կողմից, որոնց մի մասը զինված է և այդ ամենն անձի երեք [անչափահաս երեխաների աչքի առաջ](#):

Դեպքին հաջորդ օրն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների պաշտպանը՝ նշելով, որ տեղի ունեցած միջադեպից հետո 5-ամյա [տղայի ինքնազգացողությունը վատացել է](#), գիշերը երեխան մի քանի անգամ փսխել է, որ շինությունն ապամոնտաժել են երեխաների աչքի առաջ, որ թույլ չեն տվել հորը խոսել ու հանգստացնել երեխաներին, որ երեխաներից ամենափոքրը (5 տարեկան) գտնվել է հոր գրկում, երբ ոստիկանները կոպիտ քաշքշելով՝ երեխային հարկադրաբար իջեցրել են հոր գրկից և դուրս տարել տնից, հետո քաշքշելով՝ տարել են հորը, իսկ երեխան սկսել է լաց լինել: Այնուհետև, ոստիկաններն տնից քաշքշելով դուրս են հանել 10 և 13 տարեկան աղջիկներին, որոնք ևս անընդհատ լաց են եղել: *Հատկանշական է, որ ոստիկանությունը ծառայողների գործողություններում [պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմ չի գտել](#):*

Այս համատեքստում հարկ ենք համարում մեկ անգամ ևս անդրադառնալ 2021 թ. օգոստոսին Մարցում տեղի ունեցած դեպքերին և ոստիկանության ծառայողների գործողություններին, որոնք նույնպես արող ենք արձանագրել, ***օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության չարժանացան և պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի բացակայության հիմքով ոստիկանների նկատմամբ հարուցված [քրեական գործի վարույթը կասեցվել է](#), մինչդեռ*** ոստիկանության բաժանմունքում անձինք ենթարկվել են խոշտանգման, նրանց նկատմամբ կիրառվել է բռնություն, հոգեբանական ճնշում, նրանց սպառնացել են, ահաբեկել, նրանց հասցեին հայիոյանքներ են հնչեցրել՝ ցուցմունք կորզելու համար, խաթարվել է Մարց գյուղի բնականոն կյանքը. բնակիչները, այդ թվում՝ անչափահաս երեխաները, գտնվում էին հոգեկան ծանր վիճակում, ապրում են վախի ու անորոշության

մթնոլորտում, վախենում են բարձրաձայնել «իրավապահ մարմինների» կողմից իրենց նկատմամբ իրականացված ապօրինի գործողությունների մասին: Առավել մանրամասն տես չԲԱՎ գրեսենյակի պատրաստած [գեկույցում](#):

Այսպիսով՝ քաղաքացիների նկատմամբ բռնություններ, խոշտանգումներ կիրառած ոստիկաններին պատասխանատվության չենթարկելու մոտեցումը ոչ միայն շարունակական բնույթ ունի, այլ նպաստում է անպատժելիության չհաղթահարմանը, և հանգեցնում է կառավարության կողմից ոստիկանության բարեփոխումների հանձնառության նկատմամբ հանրային վստահության նվազեցմանը:

«ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ» ՏԱՐԱԾՔՆԵՐ

2021 թ.-ին ՀՀ ԱԺ դարպասներից բացի քաղաքացիների համար փակվեցին նաև հուշահամալիրները՝ հիշատակի և Նիկոլ Փաշինյանի այցերի օրերին: Օրինակ՝ Ոստիկանությունը հաղորդագրություն էր տարածել, որ Առաջին Հանրապետության կազմավորմանը նվիրված արարողակարգային միջոցառումներով պայմանավորված՝ 2021 թ. մայիսի 28-ին, ժամը 8.00-ից 11.00-ն ընկած ժամանակահատվածում, [տրանսպորտային միջոցների և քաղաքացիների համար մուտքը փակ կլինի](#) Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր: Հաղորդագրության մեջ խոսք չկար լրագրողների մասին, մինչդեռ [ոստիկանության ծառայողները թույլ չեն տվել լրագրողներին լուսաբանել](#) Նիկոլ Փաշինյանի այցը, բացառությամբ Հանրային հեռուստարձևերության լրագրողի: *Նշենք, որ ոստիկանությունը հարկ չի համարել նույնիսկ հիմնավորել նման տարբերակաված ու խտրական մոտեցում հանդիսացող այդ որոշումը:*

«Երկիր Ծիրանի» կուսակցության առաջնորդ Զարուհի Փոստանջյանը պատմել է, որ 2021 թ. սեպտեմբերի 21-ին Եռաբլուրում ոստիկաններն իր նկատմամբ [բռնություն են գործադրել և բերման ենթարկել](#): Նրան թույլ չեն տվել այցելել Եռաբլուր: Նրա պնդմանը, որ իրավունք ունի անցկացնել խաղաղ բողոք և դիրքորոշում հայտնել, ոստիկանության ծառայողը պատասխանել է, որ ինքը՝ որպես ոստիկանության գնդապետ պահանջում է հեռանալ, եթե ոչ՝ բերման կենթարկեն: «Այնուհետև բիրտ ուժի գործադրմամբ ինձ մտցրել են ոստիկանական ավտոմեքենա և ոլորել են ձեռքերս, ավտոմեքենայի մեջ ինձ [պատճառել են ուժեղ ցավ, հայիռյել են](#), ձեռքիցս խլել են հեռախոսս և ինձ տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին: Ոստիկանության բաժնում իմ խնդրանքը՝ տեղեկացնել հարազատներիս իմ գտնվելու վայրի վերաբերյալ, բավականին ուշ է թույլատրվել: Հարազատներս երկար ժամանակ չեն իմացել իմ գտնվելու վայրի մասին: Ես չեմ կարողացել նաև հրավիրել փաստաբան, այդ իրավունից օգտվելը նույնպես տեղի է ունեցել խախտումով: Փաստաբանս եկել է, ոչ թե իմ խնդրանքի հիման վրա, այլ այն ժամանակ երբ հարազատներս իմացել են, որտեղ եմ գտնվում՝ նրանք են կանչել»,-հայտնում է Զ. Փոստանջյանը: Հոկտեմբերի 8-ի դրությամբ [քրեական գործ հարուցված չէր](#):

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ VS ԴՍՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐ

2020 թ. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ [տեղեկանքում](#) ՀՔԱՎ գրասենյակն անդրադարձել է դատարանների կողմից ոստիկանության՝ անձանց ձերբակալելու որոշումները ոչ իրավաչափ ճանաչելու դեպքերին: 2021 թ. նույնպես մի շարք դեպքերում դատարանները ոստիկանության կողմից ձերբակալման որոշումը ճանաչել են ոչ իրավաչափ: Մասնավորապես [հունվարի 28-ին](#) ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով հայահավաք է իրականացվել, որի ընթացքում 21 անձ բերման է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի հատկանիշներով՝ շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելու կամ դրանք պահելու կասկածանքով: Նույն հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի շրջանակներում հինգ անձ ձերբակալվել է՝ Արագած Ախոյանը, Արշակ Զաքարյանը, Վահագն Չախալյանը, Տիգրան Չոբանյանը և Իսրայել Հակոբկոխյանը: Վարույթ իրականացնող մարմինը նրանց մեղադրանք է առաջադրել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-219-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ շենք-շինություններ զավթելու փորձի հատկանիշներով:

Դատարանը [ոչ իրավաչափ է ճանաչել](#) Տիգրան Չոբանյանի ձերբակալումը: «Դատարանը Արագած Ախոյանի ձերբակալումը [ճանաչեց ոչ իրավաչափ](#)»: Արշակ Զաքարյանը դատարանի դահլիճից ազատ արձակվեց. դատարանը [ոչ իրավաչափ ճանաչեց](#) նրա ձերբակալումը: Դատարանը Իսրայել Հակոբկոխյանի ձերբակալումը [ճանաչել է ոչ իրավաչափ](#), նա ազատ է արձակվել: Դատարանը [ոչ իրավաչափ է ճանաչել](#) նաև ապրիլի 22-ին՝ ՀՀ դատախազության դիմաց տեղի ունեցած ակցիայի մասնակից ՀՅԴ ԳՄ անդամ Արծվիկ Մինասյանի քրոջ որդուն՝ Հայկ Հեքիմյանի ձերբակալությունը:

Հաշվի առնելով դատարանների նկատմամբ վստահության ցածր մակարդակը, ինչպես նաև ոստիկանության ծառայողների անկանխատեսելի, ոչ իրավաչափ, ոչ միատեսակ գործողությունները՝ հանրության համար ստեղծվել է փակուղային իրավիճակ՝ ի վերջո որ որոշումն է իրավաչափ և օրենքին համապատասխան՝ ոստիկանության, թե՛ դատավորի: Մինչդեռ իրավական համակարգի (ինչպես ոստիկանության, այնպես էլ դատարանների)՝ հասարակական կարգի և կայունության ապահովմանն ուղղված գործողությունները պետք է հիմնված լինեն իրավունքի գերակայության սկզբունքի վրա:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ «ՌԵՅՆԵՐ»

2021 թ. հուլիսի 21-ին ոստիկանության ծառայողներն ուժեղացված ծառայություն էին կատարում Երևանում. մայրաքաղաքի տարբեր հատվածներում ոստիկանները կանգնեցնում են մեքենաները, խուզարկում: Ոստիկանության մամուլի ծառայությունից [Factor.am-ի հարցին](#)՝ արդյո՞ք ուժեղացված ծառայություն է իրականացվում և որն է պատճառը, ոստիկանության լրատվական ծառայությունից հստակ պատասխան չտվեցին: Միայն հաջորդ օրը ժամը

նուստիկանությունը [հաղորդագրություն է ներկայացրել](#) այդ գործողությունների առնչությամբ: Հուլիսի 23-ին [«ուժեղացված ծառայություն»](#) էր [իրականացվում](#) Արմավիրի մարզում:

*Ըստ այդմ՝ կարող ենք արձանագրել, որ նուստիկանության մամուլի ծառայությունը որևէ կերպ չի հիմնավորել այդ գործողությունները, և որևէ ձևով ՀՀ քաղաքացիները չեն տեղեկացվել մայրաքաղաքում մեքենաները խուզարկելու պատճառների և հիմքերի մասին, ինչը ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքն է, իսկ իրավապահ համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից են նրանց գործողությունների թափանցիկությունը, կանխատեսելիությունը և հաշվետվողականությունը: Որևէ հիմնավորում կամ բացատրություն՝ նշված զանգվածային գործողության մասին, որի հետևանքով խաթարվել, իսկ որոշ գնահատականներով նույնիսկ կաթվածահար էր եղել Երևանում և Երևանից դուրս բնականոն երթևեկությունը, որի հետևանքով **ստաջանում են օբյեկտիվ հարցադրումներ՝ մարդկային, տեխնիկական և նյութական մեծաթիվ ռեսուրսների ներգրավմամբ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից իրականացրած գործողությունների և ստուգումների իրավաչափության, համաչափության և հիմնավորվածության վերաբերյալ, չի եղել:** Ոստիկանության կողմից «ուժեղացված ծառայության» և ռեյդեր իրականացնելու խնդրին ՀՔԱՎ գրասենյակն անդրադարձել է ինչպես իր նախորդ [գեկույցում](#), այնպես էլ [հայտարարությամբ](#):*

2021 թ. հուլիսի 22-ին Hraparak.am խմբագրություն էր զանգահարել Էդգար Գասպարյանը: Քաղաքացին պատմել է, թե ինչպես են այդ օրը Սարյան փողոցում վերոնշյալ «ռեյդի» շրջանակներում կանգնեցրել իր մեքենան և վայրի մեթոդներով փորձել խուզարկել այն, որի արդյունքում նաև [ձեռք էր բերվել զինամթերք, վնասվածք հասցրել, տարել բաժին](#): Այդ ընթացքում անհետացել է նաև նրա մոտ եղած գումարի մի մասը: Նրա հետ արհամարհալից են խոսել, դիմակավորված ոստիկանների, որոնք եկել ու առանց որևէ բառ խոսելու՝ մեքենայի հենց լուսամուտից սկսել են հարվածել Էդգարին, որն ամրակապված նստած է եղել դեկին: Սկսել են քաշքշել, որ դուրս հանեն մեքենայից, ամրագոտին խանգարել է: Մի կերպ արձակել է ամրագոտին ու մեքենայից դուրս նետվել: Այդ պահին, երբ կիսակոացած վիճակում է եղել, ոստիկաններից մեկը ոտքով հարվածել է բերանին, պատկեցրել գետնին և ձեռնաշղթաներ անցկացրել: [Hraparak.am-ին](#) 2021 թ. հուլիսի 28-ին Ոստիկանությունից ասացին. քաղաքացու հաղորդումը՝ հանցագործության մասին, իրենք վերցրել են և դատախազի բանավոր պահանջով, նյութերը փոխանցել Գլխավոր դատախազություն: Դատախազությունից էլ ասացին՝ ոստիկանությունից իրենց փոխանցածն 2021 թ. հուլիսի 23-ին ուղարկել են Հատուկ քննչական ծառայություն՝ նյութեր նախապատրաստելու: Թերթի խմբագրությունը դիմել է նաև ՀՔՕ, որտեղից, սակայն, ասացին՝ դատախազությունից դեռևս նման նյութեր չեն ստացել և լինելուն պես՝ ընթացքի մասին կտեղեկացնեն:

Այսինքն՝ անձի նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրման, նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորման փաստը պատշաճ քննության չի արժանանում թե՛ Դատախազության, թե՛ քննչական մարմինների կողմից:

ԿԱՐԳԱՊԱՀՄԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ՄԱՍԻՆ

Փաստաբան Բենիկ Գալստյանը տեղեկացրել է, որ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ Վ. Հարությունյանն ի պատասխան իր գրության ոստիկանության Արաբկիրի բաժնի պետ Ա. Վաթյանի կողմից իր պաշտպանյալ Հակոբ Հովհաննիսյանին ապօրինի ձերբակալելու վերաբերյալ, պատասխանել է, որ առանց որևէ [իրավական հիմքի, առանց ձերբակալման արձանագրության անձին ձերբակալելու համար ենթակա է կարգապահական պատասխանատվության](#), սակայն ղեկավարվելով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:


Առաջինը՝ անհասկանալի է, թե անձին ազատությունից ապօրինի զրկելն ինչու և որ կարգավորմամբ է ենթակա ընդամենը կարգապահական պատասխանատվության և երկրորդը՝ ինչպես է տուժողը «զգացել» ոստիկանության ծառայողի անկեղծ զղջալը կամ ինչպես է հատուցել ազատությունից զրկելուց պատճառված վնասը, որոնք վարչության պետի տեղակալի նշված [հոդվածի պահանջներից են](#):

2021 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով 2021 թ. ընթացքում ՋԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման **159 դեպք**:

2020 թ. արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **192 դեպք**, 2019 թ.՝ **90 դեպք**, 2018 թ.՝ **181 դեպք**, 2017 թ.՝ **107 դեպք**, 2016 թ.՝ **338 դեպք**, 2015 թ.՝ **304 դեպք** (տե՛ս գծապատկեր 1): Ըստ այդմ՝ խախտումների թիվը նվազել է 33-ով (17.2%-ով)՝ 2020 թ.-ի համեմատությամբ, աճել 69-ով (43.4%-ով)՝ 2019 թ.-ի համեմատությամբ, նվազել է 22-ով (12.2%-ով)՝ 2018 թ.-ի համեմատությամբ, աճել 52 դեպքով (32.7%-ով)՝ 2017 թ.-ի համեմատությամբ, նվազել 159 դեպքով (47%-ով)՝ 2016 թ. համեմատությամբ և 145 դեպքով (47.7%-ով)՝ 2015 թ.-ի համեմատությամբ: *Նշենք, որ եթե 2021 թ.-ին խախտումները նախորդ տարվա համեմատ նվազել են ընդամենը 17 տոկոսով, ապա 2019 թ. համեմատ դրանք աճել են 43.4 տոկոսով:*

Գծապատկեր 1. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը ըստ ՋԼՄ-ների հրապարակումների դիտարկման արդյունքների 2015- 2021 թթ.




Ինչպես երևում է գծապատկերից, 2020 թ. ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի կրկնակի աճ է գրանցվել 2019 թ. համեմատ և չնչին նվազում 2021 թ.-ին:

Այսպիսով՝ 2021 թ. արձանագրվել է հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 94 դեպք: 2020 թ. ցուցանիշի համեմատ՝ այս ցուցանիշը նվազել է 17-ով (15.3%-ով): 2019 թ.-ի համեմատությամբ աճել է 45-ով (47.9%-ով), 2018 թ.-ի համեմատությամբ նվազել է 40-ով (29.8%-ով), 2017 թ.-ի ցուցանիշի համեմատ աճել է 57 դեպքով (60.6%-ով), 2016 թ.-ի ցուցանիշի համեմատ նվազել է 69-ով (42.3%-ով), իսկ 2015 թ.-ի ցուցանիշի համեմատ 107-ով (53.2%-ով) (տե՛ս գծապատկեր 2):


2021 թ. արձանագրվել է 51 անհատական բնույթի դեպք: 2020 թ.ցուցանիշի համեմատ այս ցուցանիշը նվազել է 30 դեպքով (37%-ով): 2019 թ. համեմատ այդ ցուցանիշն աճել է 10-ով (19.6%-ով), 2018 թ.-ի համեմատ 4 դեպքով (7.9%-ով), 2017 թ.-ի նույն ցուցանիշի համեմատ նվազել է 19 դեպքով (27.1%-ով), 2016 թ.-ի ցուցանիշի համեմատ՝ 118-ով (70.2%-ով), իսկ 2015 թ.-ի նույն ցուցանիշի համեմատ՝ 52-ով (50.5%-ով) (տե՛ս գծապատկեր 2):

2021 թ. արձանագրվել է նաև ընտրությունների համատեքստում ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 14 դեպք (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ուստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը (հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքեր, անհատական դեպքեր և ընտրությունների համատեքստում խախտումների դեպքեր) 2015-2021 թթ.



2021 թվականի ընթացքում խախտվել են մարդու հետևյալ 15 իրավունքները (Գծապատկեր 3)



Առավել մեծ թվով խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (86 դեպք)՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի կեսից ավելին՝ 54%: Արձանագրվել է այս իրավունքի խախտման 60 դեպք հավաքների ընթացքում, 21 անհատական բնույթի դեպք և 5 դեպք ընտրությունների համատեքստում: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն նվազել է 22,5%-ով (111 դեպք 2020 թ.-ին):

2019 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 44 դեպքում (դեպքերի 48.8%), 2018 թ.-ին 76 դեպքում (դեպքերի 42%): 2017 թ.-ին գրանցվել է այդ իրավունքի խախտման 16 դեպք (դեպքերի 15%-ը): 2016 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 157 դեպքում (ընդհանուր դեպքերի 46.4%-ը), իսկ 2015 թ.-ին՝ 70 դեպքում (ընդհանուր դեպքերի 23%-ը):

Երկրորդ ամենաշատը խախտված իրավունքը խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքն էր: 2021 թ. արձանագրվել է խախտման 83 դեպք (ընդհանուր խախտումների 52.2%): 2020 թ. ընթացքում արձանագրվել է խախտման 101 դեպք՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 52.6%-ը: 2019 թ.-ի համեմատ այս ցուցանիշն աճել է 71.3%-ով (29 դեպք):

2018 թ.-ին խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը խախտվել է 81 դեպքում (դեպքերի 44.8%): Ընդ որում՝ 73 դեպքն արձանագրվել է 2018 թվականի ապրիլի 7-25-ն ընկած ժամանակահատվածում: 2017 թվականին այդ իրավունքը խախտվել էր 17 դեպքում (դեպքերի 44.8%), 2016 թվականին՝ 121 դեպքում (դեպքերի 35.8%), իսկ 2015 թվականին՝ 96 դեպքում (դեպքերի 31.6%):

Առավել հաճախ խախտվել է նաև ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 68 դեպք (42.8%):

2020 թ.-ին արձանագրվել է այդ իրավունքի խախտման 84 դեպք (դեպքերի 43.8%), 2019 թ.-ին՝ 41 դեպք (դեպքերի 45.5%): 2018 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 84 դեպքում՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 46.4%-ը, 2017 թ.-ին՝ 62 դեպքում՝ կազմելով 49.1%-ը: 2016 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 141 դեպքում (ընդհանուր դեպքերի 41.7%-ը), իսկ 2015 թ.-ին՝ 37 դեպքում (ընդհանուր դեպքերի 12.2%-ը):

Կարող ենք փաստել, որ առավել հաճախ խախտվող իրավունքների շարքում առաջատարները շարունակում են մնալ անձնական ազատության և անձեռնմխելիության, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքները:

Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվել է Երևանում (123 դեպք, ընդհանուր խախտումների 77.4%-ը):